Ռափայել Պատկանյան

Եղիշե

Ոսկեծղոի, գեղեցկատիպ
Ո՞վ իմ գըրքույկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբախտ օրը
Դու քարոզող անմըռունչ:

Ո՞վ պիտի տար այն անըսպառ
Սերն ու գութը դեպ Հային,
Թե որ մարդիկ քեզ, ով գըրքույկ,
Երբեմըն չի կարդային:

Քեզ կարդալով՝ կըմոռանամ

Ես թերությունք մեր ազգին,
Դեպ հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կը լրցվի իմ հոգին:

Մըտքիս մեջը ես միշտ կասեմ.
«Սերունդը Վարդան մեր Քաջին

Անհընար է՝ անփառունակ
Ըստրուկ մընան կամ կորչին»:

Կամ՝ տեսնելով հեք Հայ տերտեր,

Սուրբ Ղևոնդին կը հիշեմ,
Ու հուսահատ տրրտում մրտքեր

Ինձմեն հեռու կը քրշեմ:

Եղիշեին Հայք կարդալով,
Նոր հույսերով կը լրցվին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգվո առջև կրբացվին:

Հա՛յ պատանի, շուտ-շուտ կարդա՛
Այս գրրքույկը ոսկետառ,
Որ համոզվիս՝ թե մեր հայը
Կորչելու ազգ չէ՛ իսպառ: